«ԳԵՏԱՇԵՆԻ ԱՐՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՏՆԻՆ ՄՆԱ»

ԱՆՀԱՅՏ ԴՐՎԱԳՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ԶԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Հայաստանի նորօրյա հանրապետության հերոս «Ազգային հերոս» *ԶԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ* այսօր կդառնար 45 տարեկան, սակայն իրեն չխնայելով բազում մարտական փորձություններում 1991թ. հուլիսի 19-ին Արցախի Շահումյանի շրջանի Էրքեջ եւ Վերիշեն հայկական գյուղերի [illegible] բռնկված կապարի գոտեմարտում իր երկու զինվորների՝ Վարդանի եւ Կո[illegible]ի հետ նետվեցին հակառակորդի գերակշիռ զրահատեխնիկայի դեմ, կասեցնե[illegible]վ թշնամու մահաբեր կրակահերթերը՝ փրկեցին իրենց մարտական ընկերներից [illegible]երի կյանքը, իսկ իրենք զոհվեցին...

Արցախյան պատերազմի առաջին իսկ օրից, զենք բարձրացնելով թուրք ազե[illegible]ների բռնակալության դեմ, հերոսական շար էջեր գրեց աղվանական պատե[illegible]մի մասնակից, հայդուկ գնդի վաշտապետ Զիվան Աբրահամյանը:



1990թ. Նրա անունը շատերիս հայտնի էր որպես կամավորականներին քաջ հրամանատարի: Այժմ պատմեմ սեփական աչքով տեսածը: 1991թ. ապրիլը մոտենում էր ավարտին, իսկ ես մտածում էի, թե ինչպես ազատվեմ աշխատանքային [illegible]ական հոգսերից եւ անցնեմ ռազմագործունեության, քանի որ զգում էի պատե[illegible] բոցերի մոտենալը, սակայն, ինչպես ժո[illegible] է ասում, «շաբաթն ուրբաթից շուտ ե[illegible]», այսինքն կատարվեց անսպասելին: Մա[illegible] 1-ի առավոտյան ժամը 5.00-ից 5.30-ի սահ[illegible]ում տագնապ ազդարարող հեռախոսա[illegible] հասավ նաեւ ք. Աբովյանի իմ բնակա[illegible]: Զանգահարողը Կոտայքի կամավորական [illegible] շտաբի հերթապահն էր, որը շտապ [illegible], որ Վազգեն Սարգսյանի հրամանով [illegible] է հայտարարված, բոլոր երեւանա[illegible] շրջանների ջոկատները մինչեւ 6.00-6.30-ը [illegible] է հավաքվեն Շահումյանի պալատի բա[illegible]: Րոպեներ անց մեր Երեւան մեկնող «ՈՒԱԶ» [illegible] արդեն շենքի բակում էր եւ ձայնային [illegible] շտապեցնում էր մեզ, ուստի վազ[illegible] մեքենայի մոտ ընթացքում կոճակ[illegible]ելով, սակայն շտապելով չհասցրեցի [illegible] զինվորական գլխարկս վերցնել: Ճա[illegible] մեր մեքենայում գտնվող կամավոր[illegible]ացին, որ Արցախում լուրջ կռիվներ են [illegible], սակայն դա բոլորը չէր: Ժամը 6.00-ի [illegible]ում մեր ջոկատից կամավորները [illegible]ված վայրում էին, որտեղ հավաքված [illegible] տղաներ կային կամավորական[illegible] հրամանատարներ, իսկ շրջաններից գա[illegible] ջոկատներ եւ տեղեկացնելով իրենց [illegible]ու մասին տեղավորվում էին Շա[illegible] պալատի ընդարձակ բակում, իրար [illegible]ելով ջոկատ առ ջոկատ: Արդեն մեզ [illegible] լուրերից հասկանալի դարձավ, [illegible] օրը ապրիլի 30-ին, անհավասար, [illegible]րոսական կռվում ընկել էր Արցախի [illegible] դարպասի ամրոց Գետաշենը եւ [illegible] Ազատ ու Կամո գյուղերը, զոհվել էին [illegible]որականներից ծանոթ ու մոտիկ [illegible], որոնց շարքում էր բոլորիս հարազատ, [illegible] Թաթուլ Կրպեյանը: Ժամը 7-ն էր, [illegible] լույս էր արդեն, եւ մենք կարծես ամա[illegible]ում էինք մեկս մյուսի դեմքին նա[illegible] շատ գլխիկոր գետնին էինք նայում, [illegible]յուրս երեւի մեզ «մեղավոր» էինք [illegible] Գետաշենի հարցում:

[illegible]պես ջոկատների դիմացից առաջին [illegible] մոտեցավ Վազգեն Սարգսյանը եւ [illegible]ցելով մոտ երկու տասնյակ կամավո[illegible] ջոկատների վրա հանդիսավոր կամ [illegible]ական ոչինչ չասաց, այլ մի քանի ան[illegible] գայրույթ ու վրեժխնդրություն ար[illegible] հետեւյալ բառերը. ***«Գետաշենի ա[illegible] պետք է գետնին մնա,-*** իսկ հետո ավե[illegible] ***շտապ հասնում ենք սահմանամերձ շր[illegible], եւ յուրաքանչյուր ջոկատ կատարում է [illegible]ական հանձնարարությունը, ես գործողությունների վայր կգամ վաղը՝ մայիսի 2-ին»:*** Մարտական ջոկատները անմիջապես սկսեցին մեկնել համապատասխան սահմանամերձ շրջանները: Մեկնելուց րոպեներ առաջ Զիվանը ձեռքով նշան արեց, որ գնամ իրենց մոտ, ուր կանգնած էին փոխգնդապետ Դնեպրիկ Բաղդասարյանի ու մյուս հրամանատարների հետ: Բարեւելուց անմիջապես հետո նրանք հայտնեցին, որ համաձայնեցված է, գալիս ես մեր ջոկատի հետ, գնում ենք Տավուշի եւ Իջեւանի կողմերը: Րոպեներ անց արդեն «ՈՒԱԶ» մեքենայի մեջ էինք, իսկ Զիվանը շտապեց մյուս մեքենայով հասնելով իր վաշտի տղաներին, որոնց ճանապարհել էր արդեն Սեւանի մայրուղով: Ճանապարհներին դեռեւս կային լուրջ ու վտանգավոր խոչընդոտներ, այսինքն խորհրդային բանակի Հայաստանում տեղակայված զորամասերը մեզ օգնելու փոխարեն բացարձակապես փակում էին մեր ճանապարհները դեպի սահմանամերձ շրջանները: Բազում փաստերից բերենք միայն մեկ դիպուկ օրինակ: Մեր «ՈՒԱԶ» մեքենայի առջեւում նստած էր փոխգնդապետ Դ. Բաղդասարյանը, իսկ հետեւի մասում երեք կամավորներս, ու մեքենան բարձր արագությամբ սլանում էր մայրուղով նպատակ ունենալով շտապ հասնելու նշանակման վայր: Աբովյան քաղաքի մոտերքում խնդրեցի հրամանատարին, որպեսզի մի քանի րոպեով մտնենք Աբովյան քաղաք գլխարկս վերցնելու համար, քանի որ տարածաշրջանը, ուր գնում էինք, գիտեինք, որ անձրեւային է: Բալահովտի կենտրոնական ճանապարհը փակված էր զրահատեխնիկայով, ուստի փորձեցինք շրջանցել, սակայն երկրորդական ճանապարհը արգելափակել էին երեք ավտոմատավորներ, որոնցից երկուսը հայ ենթասպաներ էին եւ տեսնելով մեզ ամոթխած հեռացան ու կանգնեցին ճանապարհամերձ պարսպի տակ: Այժմ ճանապարհի կենտրոնական մասում մեր մեքենայի դիմաց, կանգնել էր երրորդը ավտոմատը կրծքին գցած, լրիվ մարտական վիճակում, չեկավուն քյաքուլ մազերը մինչեւ ճակատը փռած մի ռուս սերժանտ ժամկետային ծառայող, եւ «կարգադրում» էր անմիջապես հետ-հետ գնալ. այդտեղով ճանապարհ չկա: Փոխգնդապետ Դ. Բաղդասարյանի թիկունքում անհանգստացած նայում էի եւ չգիտեի ինչ անել, սակայն մի բան, որ ինձ հուսադրում էր, Բաղդասարյանի արտաքինից համեստ ու ինտելիգենտ կեցվածքն էր ու բավականին տարիքով: Այդ ժամանակ դեռեւս չգիտեի, որ նա արդեն անցել էր արցախյան պատերազմի սկզբնական ու դաժան փորձություններով...

Սակայն հակառակ իմ պատկերացումների, աչքի տակով նայելով Դ. Բաղդասարյանի ձեռքերի շարժմանը նկատեցի, որ նա առանց ներքեւ նայելու, ծնկներով պահած ավտոմատը (ԱԿՄ) վեր է բարձրացնում, իսկ այդ պահին նրա զայրույթ արտահայտող դեմքը կարծես սառած էր. ***«Մատանայի ճուտ, դու էիր պակաս, որ մեր ճանապարհը փակես»:*** Կռահելով նրա վայրկենական մտադրությունը եւ ելնելով պահի վտանգավորությունից, որ Բալահովտի զորամասը կարող էր դիմել վտանգավոր գործողությունների, ես սկսեցի խնդրել Բաղդասարյանին ասելով.

-Պարոն փոխգնդապետ, հարկավոր չի, մենք հայ ենք, եւ ռուս զինվորին «ձեռք տալը» մեզ համար մեղք է, թող ինքն ամաչի, որ չի հասկանում, կույրորեն հրաման է կատարում:

Մեր մեքենան արագ վերադարձավ, դուրս եկավ Սեւանի մայրուղուց, եւ շտապեցինք առաջապահ ուժերին հասնելու համար: Օրվա երկրորդ կեսին, մեր մարտական ջոկատները հասան Տավուշի շրջկենտրոն, որտեղ մեզ դիմավորեցին ընդհանուր հրամանատար, Տավուշի շրջգործկոմի այն ժամանակվա նախագահ Վ. Մելիքյանն ու մյուս ծառայությունների պետերը, որոնք մայիսի 1-7-ի ընթացքում Տավուշում եւ շրջանի սահմանամերձ գյուղերի պաշտպանությունում հոգացին կամավորական ջոկատների սննդամթերքի եւ գիշերելու հետ կապված բոլոր տեսակի ծախսերը:

Այդ օրերին կատարված մանրամասնությունների եւ կոնկրետ մարտական գործողությունների մասին մենք առիթ ունեցել ենք հայկական մամուլում հանդես գալու, ուստի սույն հոդվածում ցանկանում ենք նկարագրել Զիվան Աբրահամյանի սխրանքներից որոշ վավերագրական դրվագներ՝ չմոռանալով Զիվանի վաշտի խիզախ մարտիկներին ու մարտական ընկեր-հրամանատարներին, որոնք ողջ են բազում մարտերից հետո եւ երախտապարտության խորը զգացումով են հիշում իրենց հերոս հրամանատարին, մարտական ընկերոջն ու հարազատ եղբորը՝ ամեն անգամ մասնակցելով Զիվանին նվիրված բոլոր տեսակի միջոցառումներին: Ի սկզբանե ասենք, որ Զիվան Աբրահամյանի մարտական վաշտը ամրակուռ էր ու անպարտելի, քանի որ նրա շուրջ էին հավաքվել կամավորական մարտիկներ, երեք եղբայրներ մի տանից Զիվանը, մեծ եղբայր Պետրոսը եւ կրտսեր եղբայր Արշակ Աբրահամյանները, նրանց հորաքրոջ որդին Սաքոն, մտերիմ ընկերներից մշեցի Ղարիբը եւ ՀԱԲ-ի Սուրոն, Արցախի գետաշենցիներ Կարենը եւ Հրաչը, Լեւուշը Գորիսից, գյումրեցի Աշոտը «Ծոն» ու էլի մի քանի տասնյակ կամավորական խիզախ մարտիկներ:

Շրջապատված լինելով նշված անձնակազմով Զիվանը իրեն ամուր ու վստահ էր զգում եւ ցանկացած վայրում արժանի հակահարված էր հասցնում մեր հակառակորդ ազերիներին: Տավուշ հասնելուն պես մայիսի 2-ի լույս գիշերը, հակառակորդին «անակնկալ մատուցեցին» մեր հրամանատարները, որոնք Տավուշի սահմանամերձ 6 գյուղերից 12 հրանոթով կրակ բացեցին հակառակորդի Թոուզի, Ղազախի սահմանամերձ շրջանների բնակավայրերի վրա խուճապի մատնելով եւ էական վնաս պատճառելով հակառակորդին: Մայիսի 4-ի լույս գիշերը, աննձնակի խիզախություն դրսեւորեցին 62-ամյա հրետանավոր փոխգնդապետ Դնեպրիկ Բաղդասարյանն ու նրա օգնական ՀԱԲ-ի Սուրոն, որոնք առավոտյան ժամը 5.30-ին Պառավաքար գյուղի խաղողի այգիներում տեղակայված մեկ հրետանային հաշվարկից կրակ բացեցին մեզանից 4-5 կմ հեռավորության վրա գտնվող ազերիների Ղշլաղ գյուղի շրջակա բարձունքներում կուտակված ազերի օմոնականների ու խորհրդային բանակի միացյալ ուժերի ու քողարկված զրահատեխնիկայի վրա: Դ. Բաղդասարյանն ու Զ. Աբրահամյանը այդ առավոտյան հարձակում գործեցին հակառակորդի տեխնիկապես մեծ եւ հզոր կուտակումների վրա:

ԳԵՏԱՇԵՆ

Լուսանալուն պես մեր հակառակորդին աջակցող խորհրդային զորքերը մարտական ուղղաթիռից եւ հրանոթներից կրակ բացեցին մեր միակ հրանոթային հաշվարկի վրա եւ լռեցրեցին այն, իսկ փոխգնդապետն ու ՀԱԲ-ի Սուրոն հրաշքով փրկվեցին թաքնվելով մոտակա մացառուտների մեջ: Այն, որ անձամբ տեսա ես, թե ինչ սխրանք կատարեց Զիվան Աբրահամյանը իր վաշտի 20-22 մարտիկների հետ, ընդմիշտ մնաց իմ հիշողության մեջ որպես հերթական մի դրվագ, որը պետք է հիշվի եւ օրինակ ծառայի մեր հայրենիքի բոլոր ժամանակի պաշտպաններին: Թաքստոցում դարանակալած ղարաբաղցի Զիվանի եւ նրա վաշտի 7 ավտոմատավոր կամավորների հետ պետք է կրակ բացեինք ազերի օմոնականների վրա, եթե նրանք փորձեին աջ թեւից գրոհել մեր հրանոթի հաշվարկի վրա: Այդ ընթացքում ժամը 6.00-ի սահմաններում, կիսախավարում նկատեցի, որ սեւ կետերի շարքեր են առաջանում դեպի հակառակորդի Ղշլաղ գյուղն ու նրա շրջակայքում երեկոյան արդեն կուտակված զորքերի կողմը: Շարքերի առջեւից գնացող երկու կետերից հանկարծական բոցի լեզուներ երեւացին, իսկ լուսածիրային կրակահերթերը տարածվում էին դիմացում, եւ լուսածիրային գնդակները վաղ առավոտյան կիսախավարում վազվզող կարմիր մկների էին նմանվում: Հասկացա, որ առջեւից կրակահերթերով գնում էին Զիվանն ու Կարենը իրենց վաշտային գնդացիրներով, իսկ նրանցից անմիջապես հետո գրոհում էին Զիվանի վաշտի մարտիկների շղթաները, որոնք իրենց «անսովոր» ու «անժամանակ» գրոհով ոչ միայն հակառակորդին խուճապ ու վնաս պատճառեցին, այլ նաեւ վռնդեցին նշված գյուղից ու նրա շրջակայքից: Լուսանալուն զուգընթաց եւ սթափվելով, հակառակորդը խոշոր տրամաչափի գնդացիրներից ու հետեւակի մարտական մեքենաներից անկանոն կրակ բացեց մեր ուղղությամբ հասկացնելով, որ հետ գնացեք, առաջ չգաք: Թվաց մի պահ, որ ընկել ենք հակառակորդի կրակային օղակի մեջ եւ դուրս գալու հնար չկա, սակայն այստեղ էլ փայլեց Զիվանի հնարամտությունը: Նա հակառակորդից աննկատ ու գաղտնի, իր վաշտի խիզախների խմբով բարձրացել էր սահմանամերձ ջրամբարի պատվարի վրա եւ պայթեցնելու սպառնալիքով սկսել էր «բանակցությունները» հակառակորդի հետ: Ազերիներին ու խորհրդային զորքի հրամանատարներին հասկանալի էր, թե պայթեցման դեպքում ինչ վնասներ կարող էր հասցնել ջուրը ադրբեջանական սահմանամերձ բնակավայրերին, ուստի հակառակորդը դադարեցրեց կրակը մեզ հնարավորություն տալով բարձրանալու Պառավաքարի բարձունքները, ուր թշնամու տանկերն այլեւս չէին կարող բարձրանալ:

...Հետո «շատ ջրեր հոսեցին», շատ բան փոխվեց: 1991թ. դեկտեմբերին արդեն մեզ հայտնեցին, որ ձեւավորվում է ՀՀ պաշտպանության նախարարությունը, եւ 1992թ. հունվարի 10-ից մեծ դժվարությամբ ծառայության անցա ՀՀ ՊՆ առաջին դեսանտագրոհային զորամասում, քանի որ 4 մանկահասակ երեխաների հայր էի, եւ ՀՀ նախագահի հրամանով պահեստի նման կատեգորիայի սպաներին չէին զորակոչում: 1992թ. մարտի սկզբին յոթ ամիս անց միայն իմացա իմ սիրելի մարտական ընկերոջ Զիվան Աբրահամյանի զոհվելու մասին, երբ նրա կրտսեր եղբայր Արշակն ու վաշտի կամավորներից գյումրեցի Ծոն Աշոտը, եկել էին մեր զորամաս Զիվանի նախկին վարորդ-զինվորին տեսակցության: Ու ամեն տարի հուլիսի 6-ին եւ 21-ին մարտական ընկերները, հարազատները, ՀՀ ազգային հերոս Զիվան Աբրահամյանին բոլոր ճանաչողները այցելում են Եռաբլուր գլուխ խոնարհելու հերոսի պայծառ հիշատակի առջեւ: Զորավար Անդրանիկի ոգին էր ապրում նրա մեջ, եւ որպես մշեցի Զիվան Աբրահամյանը պատվով կատարեց մեր զորավարի պատգամները մշտապես վաշտային գնդացրից մահացու կարկ բացելով ատելի թուրքերի վրա, իսկ նրա զինակից համագնդեցիները ամենուրեք վրեժ լուծեցին Զիվանի համար...

ԲԱԲԿԵՆ ԲԱԲԱՅԱՆ
ՀՀ զինված ուժերի փոխգնդապետ,
արցախյան պատերազմի մասնակից

ՆՈՐ ԳԻՐՔ
«Ց-ՐԴ ՀՐԱՇԱԼԻՔ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅԵԼ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ
ԵՎ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒՆ»,
որն ընդգրկում է հայոց լեզվի կանոնարկմանը, մաքրությանն ու ուղղագրությանը վերաբերող 1956—2006 թթ. Տեմինաբանական կոմիտեի և Հայերենի բարձրագույն խորհրդի ընդունած բոլոր որոշումները:
Մանրամասների համար դիմել
«Ց-ՐԴ ՀՐԱՇԱԼԻՔ»
հրատարակչություն
Հեռ.՝ 53-92-99, էլ. փոստ՝ hr9@freenet.am